ԲԵՐԳՍՈՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ

ԱՐՇԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո քեմալական վերնախավի նախաձեռնած՝ օսմանյան սոցիալական, տնտեսական և քաղաքական ավանդական համակարգերի արևմտականացման գաղափարախոսությունը հիմնված էր աշխարհիկության, ազգայնականության, եվրոպական պոզիտիվիզմի տեղային դրսևորումների և 19-րդ դարի գիտականության առանձին սկզբունքների վրա[1]: Պետականաստեղծման և ազգաստեղծման այդ գաղափարախոսությունը, որ Յակուբ Քադրի Քարաօսմանօղլուն կոչեց քեմալականություն[2], 20-րդ դարում երրորդ աշխարհի երկրների արդիականացման արդյունավետ օրինակ է[3]: Թեև այդ բարեփոխումներն ավանդաբար մեկնաբանվում են իբրև աշխարհիկ մոդեռնիստների և իսլամական հետադիմականների միջև զրո գումարով խաղ *(«zero-sum game»)*[4], պետք է նշել, որ քեմալականների շարքերը միասեռ չէին. դրանք բաղկացած էին մի շարք խմբերից, որոնք նորաստեղծ հանրապետության քաղաքական կյանքը մեկնաբանում էին գաղափարախոսական տարբեր ելակետերից: Քեմալական մտավորականության ընտրանու մի շարք ներկայացուցիչների, որոնց թվում էին, մասնավորապես, Իսմայիլ Հաքքը Բալթաջըօղլուն[5], Փեյամի Սա-

[1] Տե՛ս **Kazancıgil A.,** The Ottoman Turkish State and Kemalism // "Atatürk: Founder of a Modern Turkey", ed. A. Kazancıgil and E. Özbudun, C. Hurst, 1981, էջ 37:

[2] Քարաօսմանօղլուն եզրն առաջին անգամ կիրառել է 1929 թ. հունիսի 29-ին «Միլլիյեթ» պարբերականում տպագրած հոդվածում (տե՛ս **Gencer B.,** Ahmet Cevdet'in Çağdaş Türk Muhafazakâr Düşüncesine Etkisi // "Muhafazakâr Düşünce", 2014, № 39, էջ 26): Այդ սահմանման հիմքում դրված պատկերացումներն ավելի ուշ պիտի տեղ գտնեին Թուրքիայի 1937 թ. Սահմանադրության 2-րդ հոդվածում՝ իբրև երկրի զարգացման հիմնական 6 սկզբունքներ՝ հանրապետականություն, ժողովրդականություն, ազգայնականություն, աշխարհիկություն, էտատիզմ, հեղափոխականություն (տե՛ս «Թուրքիայի Հանրապետության պատմություն», պատ. խմբագիր Ռ. Սաֆրաստյան, Եր., 2014, էջ 73-75):

[3] Տե՛ս **Huntington S. P.,** Political Order in Changing Societies, Yale University Press, 2006, էջ 348:

[4] Տե՛ս **Waxman D.,** Islam and Turkish National Identity: A Reappraisal // "Turkish Yearbook of International Relations", 2000, № 30, էջ 4-5:

[5] Իսմայիլ Հաքքը Բալթաջըօղլուն (1886–1978 թթ.) ավարտել է օսմանյան կայսերական համալսարանը՝ հետագայում իբրև մանկավարժ վերապատրաստվելով եվրոպական մայրաքաղաքներում: Երիտասարդ տարիքում անդամակցել է երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը: Եղել է Թուրքիայի ազգային

ֆան[6], Հիլմի Զիյա Ուլքենը[7] և Մուսթաֆա Շեքիփ Թունչը[8], որոնք պատմագիտական գրականության մեջ համարվում են Թուրքիայում հանրապետական պահպանողականության սաղմնավորողները[9]: Պահպանողական քաղաքական հայացքներով այս գործիչները հարում էին նաև մոդեռնիստական կենսափիլիսոփայությանը՝ թուրքական հասարակության արդիականացման հարցում աստիճանաբար հակվելով դեպի արևմտյան ոչ պոզիտիվիստական գաղափարական հոսքեր, ինչպես օրինակ՝ ֆրանսիական սպիրիտուալիզմ (Էմիլ Բուտրու և Ֆելիքս Ռավեսսոն-Մոլյեն), ամերիկյան պրագմատիզմ (Ուիլյամ Ջեյմս և Ջոն Դյուի) և, հատկապես, բերգսոնիզմ[10]: Հարկ է նշել, որ Անատոլիայում Մուսթաֆա Քեմալի գլխավորած ազգայնամոլական շարժման սկզբնավորման ժամանակ բերգսոնական գաղափարներն արդեն իսկ բավական տարած-

---

մեծ ժողովի 7-րդ և 8-րդ գումարման պատգամավոր, կրոնական բարեփոխումների հարցերով Աթաթյուրքի խորհրդականը: Մանրամասն տե՛ս **Güngör M.,** Çağının Önünde Koşan Bir Aydın: İsmayıl Hakkı Baltacıoğlu // "Mersin Üniversitesi Eğitim Fakültesi Dergisi", 2008, № 4 (1), էջ 54-64:

[6] Փեյամի Սաֆան (1899-1961 թթ.) թուրք հասարակության շրջանում առավելապես հայտնի է նշանավոր կոմունիստ բանաստեղծ Նազըմ Հիքմեթի հետ 1930-ական թթ. կեսերին ունեցած հրապարակախոսական բանավեճերով: 1950 թ. քեմալական Հանրապետական ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) ցուցակով առաջադրվել է ԹԱՄԺ պատգամավորության թեկնածու, սակայն նրա կուսակցությունը պարտություն է կրել Ջելալ Բայարի և Ադնան Մենդերեսի Ժողովրդավարական կուսակցությունից (ԺԿ): 1950-ականներին անձամբ ծանոթացել է Մենդերեսի հետ՝ վերջինիս վրա թողնելով գաղափարական նշանակալի ազդեցություն: 1938 թ. լույս տեսած Սաֆայի «*Անդրադարձներ թուրքական հեղափոխությանը*» («Türk İnkılabına Bakışlar») գիրքը քեմալական շարժման պահպանողական մեկնաբանության առաջին փորձերից մեկն է: Մանրամասն տե՛ս **Kutlu A.,** Modern, Milliyetçi ve Muhafazakar Bir Yazar ve Düşün Adamı: Peyami Safa // "Ömer Halisdemir Üniversitesi İktisadi ve İdari Bilimler Fakültesi Dergisi", 2018, № 11 (1), էջ 139-156:

[7] Հիլմի Զիյա Ուլքենն (1901-1974 թթ.) իր գործունեությունը ծավալել է բացառապես գիտահրապարակախոսական շրջանակներում: Նրա հիմնադրած մի շարք պարբերականներում և հատկապես *«Փիլիսոփայության տարեգիրք»* («Felsefe Yıllığı») ամսագրում են տպագրվել թուրքական պահպանողական մտքի նշանավոր գործիչները, այդ թվում՝ Բալթաջըօղլուն և Թունչը: Ուլքենի մասին մանրամասն տե՛ս **Tütengil C. O.,** Hilmi Ziya Ülken'in Çıkardığı Dergiler ve Bu Dergilerde Yaptığı Yayınlar // " İstanbul Üniversitesi İktisat Fakültesi Mecmuası", 2012, № 34 (1-4), էջ 161-172:

[8] Մուսթաֆա Շեքիփ Թունչը (1886-1958 թթ.) հոգեբանի և փիլիսոփայի որակավորում է ստացել Շվեյցարիայում: Թուրքիա վերադառնալուց հետո մինչև կյանքի վերջը աշխատել է Ստամբուլի համալսարանում, վարել գիտական և հրապարակախոսական ակտիվ գործունեություն: 1920-ականների սկզբից ակտիվորեն համագործակցել է Բալթաջըօղլուի հետ: Հենց Թունչն է թուրքերեն թարգմանել Անրի Բերգսոնի առավել հայտնի աշխատանքներից մի քանիսը՝ *«Ստեղծարար էվոլյուցիա»* («Yaratıcı Tekamülden Hayatın Tekamülü», 1934 թ.), *«Ծիծաղ»* («Gülme: Komiğin Anlamı Üzerine bir Deneme», 1945 թ.), *«Գիտակցության անմիջական տվյալներ»* («Şuurun Doğrudan Doğruya Verileri», 1950 թ.) և այլն: Նրա մասին մանրամասն տե՛ս **Yaylalı İ.,** Şuurlu Muhafazakârlık: Mustafa Şekip Tunç Düşüncesinde Birey, Toplum, Yüksek Lisans Tezi, Hacettepe Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü, Ankara, 2014

[9] Հանրապետական պահպանողականության առանձնահատկությունների մասին մանրամասն տե՛ս **İrem N.,** Turkish Conservative Modernism: Birth of a Nationalist Quest for Cultural Renewal // "International Journal of Middle East Studies", 2002, № 34 (1), էջ 87-112:

[10] Ֆրանսիացի հրեա փիլիսոփա Անրի-Լուի Բերգսոնի (1859-1941 թթ.) փիլիսոփայաքաղաքական տեսության ընդհանուր բնութագրի մասին տե՛ս **Shklar J.,** Bergson and the Politics of Intuition // "The Review of Politics", 1958, № 20 (4), էջ 634-656:

ված էին հետօսմանյան թուրքական լուսավորական հանրույթի շրջանում:

Բնութագրական է, որ Անրի Բերգսոնի փիլիսոփայական հայացքներն օսմանյան մտավորական սերուցքի ուշադրության ծիրում են հայտնվել համեմատաբար ուշ՝ 1910-ական թթ. կեսերին, երբ ֆրանսիացու գործերն արդեն լայնորեն տարածված էին եվրոպական երկրներում[11]: Առաջին աշխարհամարտի ավարտին իթթիհաթականների շարքերում ձևավորում է բերգսոնական խմբակ, որի առաջամարտիկներ Բալթաջըօղլուն և Թունչը հանդես էին գալիս Անատոլիայում սկզբնավորվող քեմալական ազգայնամոլական շարժման պաշտպանությամբ՝ միաժամանակ քննադատելով գյոքալփյան պոզիտիվիստական սոցիալ-քաղաքական տեսությունը: Իր *«Թուրքիայում ժամանակակից մտքի պատմություն»* հայտնի աշխատության մեջ Ուլքենը գրում է, որ բերգսոնյան այդ խմբակը ձևավորվել է 1920-ական թթ. սկզբին *«Dergah»* («Սուֆիական առանձնոց») պարբերականի շուրջ, որի էջեր էլ նրանք բերում էին քաղաքական լիովին նոր բառապաշար[12]: Թուրք սոցիոլոգ, դեպքերի ժամանակակից Զիյաէթթին Ֆահրին (Ֆընդըքօղլու) նկարագրում է այդ ժամանակաշրջանը. *«Բերգսոնյան փիլիսոփայությունը տարօրինակ համազգեստ կրող օտար զինվորներով լցված Բեյազըթ հրապարակով անցնող համալսարանի երիտասարդ ուսանողների համար մոտակա պայծառ ապագայի ավետաբերն էր»*[13]:

Թուրք բերգսոնականները Բերգսոնի՝ Առաջին աշխարհամարտում ֆրանս-գերմանական հակամարտությանը տված գնահատականը (իմա՝ պատերազմը՝ իբրև *«Եվրոպայի բարոյական վերածննդի»* միջոց)[14] համարում էին քեմալական շարժման ընթացքում օսմանյան-իսլամական ռեակցիոն ուժերի լեգիտիմությունը խարխլող կռվան: Ըստ նրանց՝ բերգսոնյան *«այլ Արևմուտքի»* ավանդույթը պարարտ հող էր ստեղծում ազգային միասնության նոր տեսության համար՝ ընդգծելով արդիականության ձգտելու *«նոր թուրքական կամքի»* իդիոսինկրետիկ բնույթը[15]: Հետևելով Շպենգլերի *«Եվրոպայի մայրամուտի»* մոտեցում-

---

[11] Բերգսոնին անդրադարձող առաջին աշխատանքը թուրք իրականության մեջ հրապարակել է իթթիհաթական հայտնի գաղափարախոս Զիյա Գյոքալփը: Ջելյալ Սաքըփ գրական կեղծանվամբ հրապարակված նրա *«Ռըզա Թևֆիքի փիլիսոփայությունը»* հոդվածում առաջին անգամ թուրք ընթերցողին ներկայացվում է դանիացի մտածողը: Տե՛ս **Sakıp C.** (Ziya Gökalp), Rıza Tevfik'in Felsefesi // "Genç Kalemler", 01.02. 1327/1912, № 15, էջ 60-71: Քիչ ուշ Բերգսոնին է անդրադարձել նաև ինքը՝ Ռըզա Թևֆիքը (Բյոլյուքբաշի). տե՛ս **Tevfik R.,** Henri Bergson ve Felsefesi // "İçtihad", № 291 30.01. 1329/1913, էջ 20-38, Օսմանյան ինտելեկտուալ շրջանակներում բերգսոնականության տարածման մասին մանրամասն տե՛ս **Yıldırım Y.,** Bergsonculuğun Türkiye'ye Girişi ve Türk Felsefesine Etkisi // "Türkiye Araştırmaları Literatür Dergisi", 2011, № 9 (17), էջ 333-356:

[12] Տե՛ս **Ülken H. Z.,** Türkiye'de Çağdaş Düşünce Tarihi, 2. baskı, İstanbul, 1979, էջ 376:

[13] Տե՛ս **Fındıkoğlu Z. F.**, Türkiye'de Bergsonizm II // "Cumhuriyet", 15.01.1941, էջ 2:

[14] Տե՛ս **Chevalier J.,** Henri Bergson, (trans. by L.A. Clare), London, 1928, էջ 70:

[15] Այս մասին մանրամասն տե՛ս **İrem N.,** Undercurrents of European modernity and the foundations of modern Turkish conservatism: Bergsonism in retrospect // Middle Eastern Studies, 2004, № 40(4), էջ 91-92:

ներին՝ բերգսոնականները, մասնավորապես՝ Սաֆան, հեռանում են հետպատերազմյան աշխարհի ավանդական քաղաքագիտական-փիլիսոփայական մոտեցումներից՝ քեմալիստական մոդեռնիզմի տեսլականը կապելով բերգսոնյան *«այլ Արևմուտքի»* հետ[16]: Տարիներ անց՝ 1937 թ., Փարիզում ելույթ ունենալով Փիլիսոփայության համաշխարհային 9-րդ կոնգրեսի ամբիոնից, Թունչը հայտարարելու էր. *«Այսօր Թուրքիան հենց պն. Բերգսոնի նախանշած ուղով է ընթանում»*[17]:

1920-ականների վերջից խմբակի աշխատանքները նկատելիորեն ակտիվանում են. 1927 թ. Ուլքենի նախաձեռնությամբ ստեղծվում է Թուրքական փիլիսոփայական և սոցիոլոգիական ասոցիացիան (ավելի ուշ՝ Թուրքական փիլիսոփայական ասոցիացիա), որի ղեկավարումը 1930-ականների սկզբից ստանձնում է Թունչը: 1934 թ. թուրք բերգսոնականների գաղափարների տարածման հիմնական հարթակ է դառնում Բալթաջըօղլուի հիմնադրած *«Yeni Adam»* («Նոր մարդ») պարբերականը: Ընդհանուր առմամբ, 1930-ականների սկիզբը նշանավորվում է բերգսոնականների և *«Kadro»* («Կադր») ձախակողմյան կողմնորոշման ամսագրի շուրջ համախմբված մտավորականների՝ Շնքեթ Սուրեյյա Այդեմիրի, Յաքուբ Քադրի Քարաօսմանօղլուի, Վեդաթ Նեդիմ Թյորի, Բուրհան Ասաֆ Բելգեի, Իսմայիլ Հյուսրև Թյոքինի միջև քեմալական շարժման տեսական հիմնավորման շուրջ գաղափարախոսական հակադրությամբ[18]:

Մարքսիզմի ընդգծված ազդեցություն կրող քադրոյականներին և հանրապետական պահպանողականության գաղափարակիր ենիգյունականներին միավորում էր, սակայն, համանման դիրքորոշումն իսլամի նկատմամբ: 1928 թ. ապրիլի 10-ին Թուրքիայի Հանրապետության Սահմանադրության 2-րդ հոդվածում կատարված փոփոխությամբ իսլամը դադարեց համարվել երկրի պետական կրոն, և քեմալականության բոլոր համակիրները, անկախ իրենց նեղ գաղափարախոսական տարբերություններից, լծվեցին լաիցիզմի քարոզի գործին: Բացառություն չէին նաև թուրք բերգսոնականները. Սաֆան, օրինակ, իր *«Անդրադարձներ թուրքական հեղափոխությանը»* գրքում ջերմորեն պաշտպանում է քեմալական մշակութային և քաղաքական ռեֆորմները՝ իբրև հանրապետության ազգայնական գաղափարախոսության հետևանք և շարունակություն[19]: Թունչն ընդհանրապես քեմալական շարժման

---

[16] Տե՛ս **Safa P.,** Turk Düşüncesi ve Batı Medeniyet // "Türk Düşüncesi", 1958, № 1 (1), էջ 5-6:

[17] Տե՛ս **Tunç M. Ş.,** Descartes Kongresine Hitab // "Bilgi", 1958, № 11, էջ 132:

[18] «Քադրո»-«Ենի ադամ» հրապարակախոսական դիմակայության տեսակետից ուշագրավ են Բալթաջըօղլուի հետևյալ հոդվածները՝ **Baltacıoğlu İ.H.,** Kadroya Göre Y. Adam/ Y. Adama Göre Y. Adam // "Yeni Adam", 23.04.1934, № 17, էջ 11, **նույնի՝** Kadroya Cevap // "Yeni Adam", 09.07.1934, № 28, էջ 5, **նույնի՝** Kadroya Cevap // "Yeni Adam", 16.07.1934, № 29, էջ 8:

[19] Սաֆան քեմալական շարժումը բացատրում է՝ օգտագործելով բերգսոնյան կենսական լիցքի (*«élan vital»)* սկզբունքը, և պնդում, որ լիցքը չի կարող անհետևանք մարել: Տե՛ս **Safa P.,** Türk inkılabına bakışlar, İstanbul, 1938, էջ 203-206, նաև՝ **İlikan Rasimoğlu C.G.,** Peyami Safa and Turkish Conservatism // Global Media Journal Turkish Edition, 2012, № 3 (5), էջ 86-104:

հաղթանակը բացատրելիս նոր հանրապետական աշխարհիկ աշխարհայացքը (հեղինակը կիրառում է հեգելյան *«Weltanschauung»* եզրի գերմաներեն տարբերակը)[20] կապում է օսմանյան աստվածային կանխագիտության (արաբ.՝ عادت الله [ādetullāh])[21] գաղափարի հետ[22]:

Հանրապետական պահպանողականությունն իր բնույթով հակակղերական է, բայց ոչ հակակրոնական. այս առումով թուրք պահպանողական մոդեռնիստները ձգտում էին եզրանշել կրոնականության հանրապետական ընկալումը[23]: Ըստ նրանց՝ դրա համար անհրաժեշտ էր բարեփոխել ավանդական իսլամական մտածողության համակարգը՝ բացելով այսպես կոչված *«անկախ դատողության դարպասները»* (արաբ.՝ باب الاجتهاد [bāb al-ijtihād])[24]: Կրոնի հարցերի շուրջ թուրք բերգսոնականների մտքի խմորումներն ավելի ուշ՝ 1950-ականների կեսերից, տեղ են գտնում Բալթաջըօղլուի հիմնած *«Din Yolu»* («Կրոնի ուղի») ամսագրում:

Բերգսոնյան *«ստեղծարար էվոլյուցիայի»* տեսության հիմքի վրա նրա թուրք հետևորդներն առաջ են քաշում ժամանակակից հասարակության ստեղծման ինքնակամության (սպոնտանության) թեզը: Սաֆայի *«Կյանքի դեմ մեր համակարգերը»* ծրագրային հոդվածում քեմալական շարժման պրագմատիզմը մեկնաբանվում է բերգսոնյան փիլիսոփայական բառապաշարի այնպիսի եզրերի համատեքստում, ինչպիսիք են *«ստեղծարարությունը», «ինքնակամությունը», «կենսականությունը»* և այլն[25]: Քեմալական շարժման պրագմատիկ բնույթի մասին դրույթը կարմիր թելի նման անցնում է նաև Ուլքենի և Բալթաջըօղլուի մոտ[26]: Բերգսոնականները միաժամանակ հանդես են գալիս 1920-ական թթ. լիբերալ մոդեռնիզմի եվրոպական դասական տեսլականի դեմ՝ համարելով, որ քեմալական արդիականացումը պետք է դիտարկել *«Արևմուտքի դեմ պայքարող Արևմուտքի»* տրամաբանության մեջ[27]:

Ընդհանուր առմամբ հանրապետական պահպանողականությունը քեմալական պաշտոնական գաղափարախոսության հակաօսմանյան, ապահիլամական և ոչ լիբերալ հայացքները համադրում էր ազգայնա-

---

[20] Տե՛ս **Tunç M. Ş.,** Milliyet İdeali ve Topyekün Milli Terbiye // "Cumhuriyet", 05.04.1943, էջ 2:

[21] Տե՛ս **Tunç M. Ş.,** Millet ve İnsan // "Cumhuriyet", 07.04.1943, էջ 3:

[22] Տե՛ս **İrem N.,** Turkish Conservative Modernism, էջ 98:

[23] Թուրք բերգսոնականների կրոնական հայացքների մետամորֆոզի ընթացքի մասին պատկերացում կազմելու համար տե՛ս Թունչի հետևյալ գրքույկը՝ **Tunç M. Ş.,** Bir Din Felsefesine Doğru, Ankara, 1959:

[24] Տե՛ս, օրինակ, **Tunç M. Ş.,** Kader ve Kanun // "Cumhuriyet", 26.04.1942, էջ 2: «Իջթիհադի դարպասների» բաց/փակ լինելու մասին ժամանակակից գիտական տեսակետի համար տե՛ս **Hallaq W. B.,** Was the Gate of Ijtihad Closed? // "International Journal of Middle East Studies", 1984, № 16 (1), էջ 3-41:

[25] Տե՛ս **Safa P.,** Hayat karşısında sistemlerimiz // "Cumhuriyet", 11.07.1933, էջ 3:

[26] Տե՛ս **Ülken H.Z.,** Veraset ve Cemiyet, İstanbul, 1957, **Baltacıoğlu İ.H.,** Tarih ve Terbiye, İstanbul, 1933: Տե՛ս նաև **նույնի**՝ Eski ve Yeni, Olü ve Diri // "Yeni Adam", 1941, № 340, էջ 2, **նույնի**՝ Milli Anane // "Yeni Adam", 1942, № 366, էջ 2:

[27] Տե՛ս **Safa P.,** Turk Düşüncesi ve Batı Medeniyet, էջ 4-5:

կան ոչ ստանդարտ տարրերի հետ՝ մերժելով ինչպես օսմանյան քաղաքագիտական ավանդույթը, այնպես էլ մոդեռնիզմի դասական եվրոպական իդեալները[28]: Երկրորդ աշխարհամարտին հաջորդող շրջանում բազմակուսակցական քաղաքական համակարգին անցում կատարելուց հետո հիմնական ընդդիմադիր Ջելալ Բայարի և Ադնան Մենդերեսի գլխավորած Ժողովրդավարական կուսակցությունը սկսում է լայնորեն շրջանառել հանրապետական պահպանողականության բերգսոնյան հիմնական դրույթները: Նրանք արագորեն իշխանության են գալիս՝ հաղթանակի հասնելով 1950 թ. խորհրդարանական ընտրություններում:

Բանալի բառեր – *թուրքական պահպանողականություն, պահպանողական մոդեռնիզմ, քեմալական պոզիտիվիզմ, քեմալականություն, բերգսոնականություն, Անրի Բերգսոն*

АРШАК ГЕВОРГЯН – ***Влияние бергсоновских идей на становление республиканского консерватизма в Турции.*** – Философия крупного французского мыслителя Анри Бергсона сильно повлияла на модернистскую идеологию в Европе начала прошлого века. Бергсон оспаривал позитивистское восприятие понятия «Запад», и этот подход с конца 1910-х гг. возобладал в постосманской культурной элите. Позже идеи Бергсона сформировали альтернативную консервативную среду в только что созданной кемалистской республике. Не отличаясь политически от господствовавшей идеологии, турецкий республиканский консерватизм поддерживал идею модернизации, отвергая при этом европейский рационализм. В статье освещены консервативные модернистские взгляды турецких последователей Бергсона; в их числе Исмаил Хаккы Балтаджиоглу, Пеями Сафа, Хильми Зия Улькен и Мустафа Шекип Тунч.

Ключевые слова: *турецкий консерватизм, консервативный модернизм, кемалистский позитивизм, кемализм, бергсонизм*

ARSHAK GEVORGYAN – ***The Impact of Bergsonian Ideas on the Development of Republican Conservatism in Turkey***. – The philosophy of major French thinker Henri Bergson had a massive influence on the development of modernist ideology in Europe by the turn of the last century. His approach of challenging positivist understanding of the notion of ‘the West’ was overwhelmingly popular among Post-Ottoman cultural elites starting by the end of the 1910s. It consequently inspired the development of an alternative conservative milieu in the early days of newly-established Kemalist Republic. Not being politically different from ruling ideology, Turkish republican conservatism stood for the liberal idea of modernity while rejecting European ideological rationalism. The paper touches upon the conservative modernist views of Turkish Bergsonians such as İsmayıl Hakkı Baltacıoğlu, Peyami Safa, Hilmi Ziya Ülken and Mustafa Şekip Tunç.

Key words: *Turkish conservatism, conservative modernism, Kemalist positivism, Kemalism, Bergsonism, Henri Bergson*

Ներկայացվել է՝ 22.12.2018
Գրախոսվել է՝ 01.06.2019
Ընդունվել է տպագրության՝ 12.07.2019

[28] Տե՛ս **İrem N.,** Turkish Conservative Modernism, էջ 96-97: